ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 դեկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

184
(2850)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-ԻՑ ՀԵՌԱՑՆՈՒՄ ԵՆ ԿԱՄԱՅԱԿԱՆ ՈՒ ԱՆԱՐԴԱՐ

Նիկոլ Փաշինյանը որոշել է «պատժել» չենթարկվող ՔՊ-ականներին:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն են փոխանցում, վերջին շրջանում վարչության եւ նախաձեռնող խմբի նիստերին Նիկոլ Փաշինյանն անընդհատ խոսում է ՔՊ կուսակցության գաղափարական թեզերի, տեսլականի ու ծրագրերի մասին, իր խոսքում շեշտում է կուսակցության գաղափարախոսությանը հավատարիմ մնալու ու դրանցից չշեղվելու կարեւորության մասին:

Հենց սրանով է պայմանավորված, որ վերջին շրջանում ՔՊ-ից հեռացվում են անգամ նրա մտերիմները. այսպիսով նա փորձում է նաեւ դասեր տալ իր մյուս թիմակիցներին՝ ցույց տալով, թե ինչ կարող է լինել նրանց հետ, ովքեր իր խոսքից ու ծրագրերից կփորձեն շեղվել:

Հիշեցնենք, որ ՔՊ ակունքներում կանգնած Սարգիս Ալեքսանյանը դեկտեմբերի 19-ին հեռացվեց կուսակցությունից. իրականում կուսակցական անարդարության զոհ է: Նրա մասին ՔՊ ժողովների ժամանակ չարախոսել են կուսակցականները, ինչ-ինչ բաներ վերագրել նրան, թե պաշտոն ու կարգավիճակ չունենալով՝ հարստացել է: Իրականում հարստացել, կենսամակարդակի ու բարեկեցության իրենց մակարդակը բարձրացրել են գրեթե բոլոր ՔՊ-ականները, սակայն թիրախավորվել է Սարգիս Ալեքսանյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խարդավանքների եւ սուտ լուրերի ճշտման համար 2-3 անգամ Սարգիս Ալեքսանյանին հրավիրել են կուսակցություն՝ զրույցի, սակայն նա չի կարողացել ներկայանալ, քանի որ ընտանիքի անդամներից մեկը առողջության լրջագույն խնդիրներ ունի: Ս. Ալեքսանյանը գերադասել է ընտանիքի կողքին լինել դժվար պահին, եւ, ահա, ՔՊ-ականները նրան անարդար, կամայական հեռացրել են կուսակցությունից: Արդարության, թիմի, կուսակցական պարտականությունների մասին պատկերացումները ՔՊ-ում խմբային են՝ բոլորով ստի կողքին՝ ընդդեմ մեկի: Հեռացրին ՔՊ ակունքներում կանգնած հավատարիմներից մեկին անարդար եւ կամայական ձեւով: Հետաքրքիր է, թե ով պետք է վերստուգի ՔՊ վերստուգիչների վարքը, ունեցվածքը, կոռուպցիոն հակումներն ու դրսեւորումները:

Հիշեցնենք նաեւ, որ Սարգիս Ալեքսանյանը ԱԺ պատգամավորներ Վիլեն Գաբրիելյանի, Արմեն Փամբուխչյանի եւ էլի շատերի մտերիմ ընկերն է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավորներն առաջիկայում տարեվերջյան ամփոփիչ հավաք-քննարկում են պատրաստվում անել՝ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Թե ինչ հարցեր են օրակարգում, «Հայաստան» խմբակցությունից մեզ հայտնեցին, որ ամփոփելու են տարին, ինչպես նաեւ քննարկելու են առաջիկա անելիքները, խորհրդարանում իրենց մարտավարության հետ կապված հարցեր: Հանդիպումը նախատեսվում է հաջորդ շաբաթ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը հաստատեց այս տեղեկությունը: «Մինչեւ տարեւերջ, այո՛, հանդիպում կլինի: Ամփոփելու ենք անցնող տարին, մեր ձեռքբերումները, բացթողումները, երկրում տեղի ունեցող իրադարձությունները, ինչպես նաեւ մեր առաջիկա անելիքները»-ասաց նա:

Հնդկաստանի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահագն Աֆյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի սեպտեմբերի 22-ին: Աֆյանն արտաքին հարաբերություններում մեծ փորձ ունեցող մասնագետ է, ինչը հասկանալի է դառնում նրա կենսագրականից: Նա եղել է Իրանի դեսպանության երրորդ քարտուղարը դեռ 2006 թվականին: Նա միանձնյա սեփականությամբ ունի 3 անշարժ գույք՝ 1 անհատական բնակելի տուն, 1 բնակարան՝ բազմաբնակարան շենքում, եւ 1 ավտոկայանատեղի: 2019 թվականին Աֆյանը գնել է 2012 թվականի արտադրության Jeep մակնիշի մեքենա: Դեսպանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 72 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 500 ԱՄՆ դոլար: Նրա տարեկան եկամուտը կուտակվում է միայն ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացվող աշխատանքի վարձատրությունից, որը կազմում է 5 մլն 765 հազար դրամ, որն ամսական կազմում է գրեթե 480 հազար դրամ: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը պաշտոնի ստանձնման կամ դադարեցման օրվա դրությամբ կազմել է 1 մլն 867 հազար դրամ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկում փոփոխություններ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ բանտապետերի տեղափոխության գործընթաց կլինի, ու չի բացառվում, որ շատերն էլ այդ ճանապարհին ազատվեն պաշտոնից: Դեկտեմբերի 19-ին գրել էինք, որ, Նիկոլ Փաշինյանի հրամանով, Ամբակում Գրիգորյանը Քրեակատարողական ծառայության պետ է նշանակվել: Դեռ այս տարվա հոկտեմբերի 14-ին գրել էինք, որ, մեզ հասած տեղեկությունների համաձայն, ՔՊ-ականների մի հատված արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանին է առաջարկել Ամբակում Գրիգորյանի թեկնածությունը, սակայն նախարար Մինասյանը մերժել է: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նրան հասկացրել են, որ Գրիգորյանը միակ արժանի թեկնածուն է: Արդյունքում նախարարի մերժումը ոչինչ չտվեց, եւ Ամբակում Գրիգորյանը, քաղաքական որոշմամբ, նշանակվեց:

ՄՏԱՑԱԾԻՆ ՀԱՐՑ

ԱՐՏԱՀԵՐԹԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳ ՉԿԱ

Վերջին շրջանում իշխանություններ՝ արտահերթ ընտրությունների գնալու մասին խոսակցությունները նոր թափ են ստանում:

Այս առիթով ArmLur.am-ը զրուցել է ՔՊ խմբակցության պատգամավոր Հրաչ Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, արտահերթ ընտրությունների մասին այս թեժ խոսակցությունները որքա՞նով են իրական, արդյոք ՔՊ-ն 2024-ի գարնանը կամ աշնանը արտահերթ անելու ծրագրեր ունի՞:

-ՔՊ կուսակցությունում նման քննարկում չկա, արտահերթ ընտրությունների հարց չի քննարկվում: Ես ինքս էլ բազմիցս այս մասին խոսել եմ, բայց, չգիտես՝ ինչու, մեր ասածները երկրորդ պլան են մղվում եւ, չգիտես՝ որտեղից, խոսակցություններ են տեղում արտահերթի մասին:

-Խոսակցությունների համար հիմք է տվել այն, որ վերջին շրջանում ՔՊ-ն առավել հաճախակի է նիստեր անում, Փաշինյանը հանդիպումներ է ունենում մարզային ակտիվի հետ: Սրանից ելնելով՝ խոսակցություններ են շրջանառվում, որ պատրաստվում եք արտահերթ ընտրությունների:

-Նիստերը կուսակցության ներքին հարցերին են վերաբերում, քննարկումներ են ընթանում արտաքին քաղաքականության, ներքին քաղաքականության մասով, բայց այդ նիստերի ժամանակ արտահերթ ընտրությունների մասին խոսակցություն չի եղել:

-Քաղաքական դաշտը պնդում է, որ Ադրբեջանում փետրվարին կայանալիք արտահերթ ընտրությունների եւ ՔՊ արտահերթի ծրագրերը զուգադիպություն չեն: Ի՞նչ ընդհանրություն կա:

-Իրենք տեսնում են ընդհանրություն, թող տեսնեն: Մեզ մոտ նման հարց չի քննարկվում, բայց մտացածին նման հարց են առաջ բերում, որպեսզի մի հատ էլ ընդհանրություն գտնեն. դա ավելի շատ խոսում է մեր միասնության մասին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՉԿԱ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԱՐՑԱԽԻ ՁԵՌԱՄԲ ԼԵԳԻՏԻՄԱՑՎԱԾ ՉԷ

«Արցախը լուծարելու մասին հրամանագիրն այլեւս գոյություն չունի»,- լրատվամիջոցների հետ զրույցում ասել է Արցախի նախագահի խորհրդական Վլադիմիր Գրիգորյանը՝ ընդգծելով, որ դրա համար հիմք է հանդիսանում նախագահի հոկտեմբերի 19-ի հրամանագիրը, համաձայն որի՝ Արցախի նախագահը, պետնախարարը, կառավարության անդամները, խորհրդարանը, անվտանգության խորհրդի քարտուղարը, իրավապահ մարմինները, Ստեփանափակերտի քաղաքապետը ու վարչական շրջանների ղեկավարները շարունակում են պաշտոնավարել՝ հասարակական հիմունքներով, այսինքն՝ առանց վարձատրության:

Ավելի ուշ արդեն Արցախի տեղեկատվական շտաբը հաղորդագրություն տարածեց՝ տեղեկացնելով, որ Սամվել Շահրամանյանը հանդիպել է պետական այն մարմինների ղեկավարների հետ, ովքեր շարունակում են պաշտոնավարել հասարակական հիմունքներով:

Հանդիպման ժամանակ Արցախի նախագահը, անդրադառնալով վերջին շրջանում լայն քննարկում ստացած իր՝ սեպտեմբերի 26-ի հրամանագրին, ընդգծել է, որ՝ «Արցախի Հանրապետության իրավական դաշտում գոյություն չունի փաստաթուղթ, որով նախատեսվում է լուծարել պետական ինստիտուտները»:

Քաղաքական վերլուծաբան Հակոբ Բադալյանը, լրատվամիջոցների հետ զրույցում խոսելով Արցախի Հանրապետության նախագահի խորհրդականի այս հայտարարության մասին, ասաց, որ փաստացի կա օկուպացված, էթնիկ զտված ու հայաթափված Արցախի Հանրապետություն, սակայն կա իրավիճակ, երբ այդ ամենն Արցախի իսկ ձեռամբ լեգիտիմացված չէ:

«Եթե որեւէ հղում լինի հրամանագրին, անշուշտ, դա կնշանակի, որ առկա իրավիճակը լեգիտիմացվում է Արցախի ձեռքով. փաստացի ունենք իրավիճակ, որ դա այդպես չէ: Հայտարարությունը, որ Արցախի նախագահի այդ հրամանագիրն իրավական ուժ չունի, միտված է նրան, որպեսզի հետագայում հնարավորություն ստեղծել կամ չարգելափակել արցախցիների իրավունքների պաշտպանության ուղղված աշխատանքը: Մեծ հաշվով, թերեւս, այսպիսի մեկնաբանության առաջին ազդակը հենց ինքը՝ Սամվել Շահրամանյանն էր տվել՝ ասելով, որ դրան ավելի ուշ անդրադարձ կլինի: Հիմա մենք այդ անդրադարձը տեսնում ենք, չեմ բացառում, որ գուցե լինի ավելի հանգամանալից անդրադարձ:

Մյուս կողմից՝ այստեղ նույնիսկ մեկնաբանության հարց էլ չէ, որովհետեւ չի կարող լինել որեւէ պետական կազմավորում՝ ճանաչված, թե ոչ ճանաչված, որտեղ նախագահի ստորագրությունը դառնա այդ կազմավորման լուծարման իրավական ծանրակշիռ հիմք»,- նշեց Հակոբ Բադալյանը:

Քաղաքական վերլուծաբանի խոսքով՝ եթե պատկերացնենք որեւէ պետություն՝ լինի մեծ կամ փոքր, եւ այդ պետության առաջնորդի ստորագրությամբ պետության լուծարում, սա որեւէ կերպ չի կարող տեղավորվել իրավաբանության շրջանակում:

Հարցին՝ գուցե ՀՀ իշխանությունները հենց սրա համար են ասում, որ ՀՀ-ում Արցախի պետական ինստիտուտների գործունեությունը կվտանգի ՀՀ անվտանգությունը, քանի որ լավ գիտեն, եթե ինստիտուտները գործեն, ապա Արցախը չի կարող լուծարվել, Հակոբ Բադալյանը պատասխանեց, որ ՀՀ իշխանության հայտարարությունները պայմանավորված են առկա ռազմաքաղաքական իրավիճակով, նաեւ ուժերի այն հարաբերակցությամբ, որը հիմա առկա է, եւ միտված են ընդամենը Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի շուրջ բանակցային գործընթացում ապակառուցողականության առիթներ չտալուն:

«Իհարկե, Ադրբեջանի վարքագիծն առանց այդ էլ ապակառուցողական է, եւ Բաքուն այսպիսի որեւէ առիթի չի սպասում որեւէ սադրանքի գնալու համար: Այդուհանդերձ, կարծում եմ՝ Հայաստանի իշխանությունների հայտարարությունները միտված են դրան, այսինքն՝ չտալ սադրանքի նոր առիթ:

Միաժամանակ Արցախի պետական ինստիտուտները, որոնք, բնականաբար, տեղահանվել են արցախցիների հետ միասին, կարող են իրենց հետագա գործունեությունը կազմակերպել՝ ըստ հայեցողության: Այսինքն՝ չեմ կարծում, որ Հայաստանում որեւէ մեկն արգելք լինի այդ գործունեության եւ կազմակերպական ձեւերի ընտրության հարցում: Պարզապես պաշտոնական Երեւանն իր հայտարարությամբ փորձում է ցույց տալ, որ ինքը որեւէ կերպ չի մասնակցում եւ չի խրախուսում այդպիսի գործունեությունը»,- եզրափակեց Հակոբ Բադալյանը:

ՄԻՆՉ ՕՐՍ ՊԱՐԶՎԱԾ ՉԵՆ

Շուրջ 1,5 տարի է անցել, սակայն մինչ օրս իրավապահները չեն կարողանում բացահայտել ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի տան եւ խանութի մոտակայքում հնչած պայթյունի մեղավորներին: Պայթյունի դեպքից անց՝ 1,5 տարի է՝ քննություն է իրականացվում, եւ քրեական հետապնդման ենթարկվող անձ չկա:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մեզ հասած տեղեկություններով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանի հայրը՝ Զարեհ Սարգսյանը, իրավապահներին բացատրություն է տվել Արաբկիրում տեղի ունեցած պայթյունի գործով: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին հայտնել էր, որ չի կարող ասել՝ արդյոք կատարվածն իրենց հետ կապ ունի, թե ոչ: «Թող իրավապահները պարզեն»,- ասել էր Զարեհ Սարգսյանը: Նկատենք, որ պայթյունը եղել էր 2022 թվականի օգոստոսի 22-ին Սարգսյանին պատկանող՝ Երեւանի Նաիրի Զարյան փողոցում գտնվող խանութ-յուղման կետի տարածքում: Այդ տարածքից փոքր-ինչ հեռավորության վրա է գտնվում պատգամավորի հայրական տունը, ու համադրելով բոլոր հանգամանքները՝ հարց է առաջանում՝ պայթյունն ուղղակի պատահականությո՞ւն է եղել, թե՞ ՔՊ-ական պատգամավորի դեմ է ուղղված. գուցե մարդիկ կան, որոնք փորձել են ինչ-որ բան հասկացնել պատգամավորին կամ նրա ընտանիքի անդամներից որեւէ մեկին: Հանգամանքները մինչ օրս պարզված չեն:

«ՏԱՐԻՆ ՄԵԿ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԿՐԵՆՔ»

«Բավական է մի-երկու ֆեյսբուքյան օգտատեր էդ ապուշությունը գրի, ու դուք գալու եք, ԱԺ նախագահին այդ հարցերը տաք, հա՞»,- երեկ լրագրողների հետ ճեպազրույցում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն այսպես արձագանքեց հարցին, թե հնարավոր է՝ արտահերթ ընտրությունների հարց են քննարկում ՔՊ-ում: Նա վստահեցրեց, որ դա «ապուշություն է, հիմարություն եւ սուտ». «Ինչի՞ համար են պետք արտահերթ ընտրությունները: ՔՊ-ում կուսակցաշինական հարցեր ենք քննարկում, կուսակցություն ենք ձեւավորում: Ընտրություններից հետո մենք նաեւ քննարկել ենք քաղաքի ընտրության արդյունքները: Հլը մի հատ հարց տամ՝ ինչի՞ համար պետք է գնանք արտահերթ ընտրությունների»: Լրագրողների դիտարկմանը՝ որ ձեզ համար ցանկալի ընդդիմություն բերեք, Ալեն Սիմոնյանն արձագանքեց. «Իսկ էս ընդդիմությունը մեզ համար ցանկալի չի՞. մեծամասնություն ունենք, ինչի՞ պիտի գնանք նոր ընտրությունների: Էլ չեմ ասում, որ կարող ենք ու այս պահի դրությամբ պատրաստ ենք տարին մեկ ընտրություններ կրենք, իսկ ընդդիմությունը պատրաստ չի ընդհանրապես ընտրությունների գնա, նույնիսկ քաղաքային ընտրություններին չկարողացան գնալ: Իրենք օրակարգ են ձեւավորում, հետո սկսում են այդ օրակարգի դեմ պայքարել, հո մանկապարտե՞զ չի: Ո՛չ, նման հարց չենք քննարկել: Իմաստը ո՞րն է, բացատրե՛ք: Մենք օրե՞նք ունենք, որ ուզում ենք ԱԺ-ում անցկացնենք, չենք կարողանում. նպատակը մի հատ հնարե՛ք»:

ԱՉՔԻՆ ԹՈՔ ԵՆ ՓՉՈՒՄ

Դեկտեմբերի 19-ին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստի ժամանակ, ամփոփելով կուսակցության 3-րդ ժողովի արդյունքները, վարչության նախագահ Նիկոլ Փաշինյանը ՔՊ-ից հեռացրել է Սարգիս Ալեքսանյանին ու Արտուշ Եղիազարյանին: Նախնական տվյալների համաձայն՝ պատճառը եղել է նրանց կողմից կարգապահական որոշ խախտումների արձանագրումը:

ArmLur.am-ի տեղեկատվության համաձայն՝ պատճառը եղել է այն, որ վերջիններս կուսակցության անդամ դառնալուց հետո սկսել են բարգավաճում ապրել իրենց կենսակերպի մեջ:

ArmLur.am-ի աղբյուրները հաղորդում են, որ տեւական ժամանակ է, ինչ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ ուսումնասիրում են իրենց կուսակցության յուրաքանչյուր անդամի վարքուբարքը, նրանց պահվածքը տարբեր միջավայրերում ու ողջ առօրյան՝ հասկանալու՝ ով ինչով է զբաղված: Սարգիս Ալեքսանյանը, որը թունդ նիկոլական է եւ շատ սերտ կապեր ունի Նիկոլ Փաշինյանի ու ՔՊ-ական վերնախավի հետ, ինչպես նաեւ ՔՊ-ի կուսակցության պատգամավոր Վիլեն Գաբրիելյանի մտերիմ ընկերն է, սկսել է աչքի ընկնել իր ապրելակերպով:

Նիկոլ Փաշինյանին ու ՔՊ-ականներին անհանգստացրել է Սարգիս Ալեքսանյանի այդ պահվածքն ու բարգավաճող կյանքը, քանի որ նա ո՛չ պատգամավոր է, ո՛չ էլ պաշտոնյա:

Ըստ այդմ էլ՝ Փաշինյանն ու ՔՊ-ական վերնախավը անհանգստացել են, թե ինչի շնորհիվ է նրանց կյանքն այդպես «աճել»:

Փաշինյանն էլ, անհանգստանալով, որ նրանք կպախարակվեն ժողովրդի կողմից, ժողովրդի աչքին թոզ փչելու համար նրանց հեռացրել է կուսակցության շարքերից:

ArmLur.am-ը պարզելու համար, թե ինչի շնորհիվ է Ալեքսանյանն սկսել շքեղ մեքենաներ վարել ու լավ ու ճոխ կյանքով ապրել, փորձել է կապ է հաստատել վերջինիս հետ, սակայն Ալեքսանյանի հեռախոսահամարը շարունակում էր անհասանելի մնալ:

Հ. Գ. Ստացվում է, որ հարստանալ կարող են միայն գործող պաշտոնյաները, իսկ մյուսները, որոնք պաշտոն չունեն, եւ իրենց կյանքում որոշակի կենսամակարդակի փոփոխություն է եղել, ապա պետք է հեռացվեն ՔՊ-ից:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՈՒՂԵՐՁ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Քուվեյթի Պետության էմիր Շեյխ Միշալ Ալ-Ահմադ Ալ-Ջաբեր Ալ Սաբահին՝ երկրի ղեկավարությունը ստանձնելու կապակցությամբ: Ուղերձում ասված է. «Ձեզ եմ հղում իմ ջերմագին շնորհավորանքները Քուվեյթի Պետության ղեկավարությունը ստանձնելու կապակցությամբ: Մաղթում եմ նորանոր հաջողություններ եւ ձեռքբերումներ Ձեր այս առաքելության իրագործման ճանապարհին:

Մեր երկրների միջեւ առկա հարաբերություններն ունեն զարգանալու եւ խորանալու ներուժ: Պատրաստակամություն եմ հայտնում միասնական աշխատանքի շնորհիվ առավել ամրապնդելու երկկողմ բարեկամական հարաբերությունները համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ ի շահ մեր երկու ժողովուրդների:

Օգտվելով առիթից՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն եւ հաջողություններ, իսկ Քուվեյթի բարեկամ ժողովրդին՝ հարատեւ խաղաղություն եւ բարօրություն»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՂԱՊԱՐԵԼՈՒ ԵՎ ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Հայաստանի ժուռնալիստների միությունը հայտարարություն է տարածել. «Դեկտեմբերի 7-ին Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանն ԱԺ բարձր ամբիոնից մի քանի լրատվամիջոցի հասցեին իրեն թույլ է տվել հիմնազուրկ արտահայտություններ, որոնք ոչ միայն հարիր չեն ԱԺ պատգամավորին, այլեւ իրենց մեջ պարունակում են զրպարտության ու վիրավորանքի, ինչպես նաեւ Քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմ:

Այսպես, իր ելույթում Արթուր Հովհաննիսյանը մասնավորապես ասել է.

«Մենք գիտենք՝ հրապարակումները Հայաստանում ոնց են ծնվում: Օրինակ՝ ինչ-որ մեկը կարող է «Ժողովուրդ» օրաթերթին փող տա, ինչ-որ մեկի մասին հոդված պատվիրի, վատ, որ պախարակի մարդուն, ինչը նորմալ երեւույթ է «Ժողովուրդ» օրաթերթի համար, կամ asekose.am-ի կամ «Հրապարակի» համար, ու հետո այդ հրապարակումները գան ու տեղ գտնեն եզրակացության մեջ»:

Նույն օրը «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանն Ազգային ժողովում մոտեցել է Արթուր Հովհաննիսյանին եւ առաջարկել միասին գնալ Ազգային անվտանգության ծառայություն կամ ՀՀ դատախազություն, որպեսզի վերջինս իր հնչեցրած մեղադրանքների առնչությամբ հաղորդում տա ենթադրյալ հանցանքի վերաբերյալ՝ բնականաբար, դրանից բխող բոլոր քրեաիրավական ընթացակարգերի ուղեկցությամբ: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը մերժել է իրավապահներին այցելել՝ հրաժարվելով նաեւ բացատրություն տալ իր հնչեցրած հայտարարությունների համար:

Դեկտեմբերի 15-ին՝ վերոնշյալ զրույցից 1 շաբաթ հետո, «Ժողովուրդ»-ը թեմայի վերաբերյալ տեսանյութ հրապարակեց, որտեղ Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանը, միջազգային իրավունքի մասնագետ Արա Ղազարյանը, «Մեդիամաքս» լրատվական գործակալության խմբագիր Դավիթ Ալավերդյանը կարծիք հայտնեցին դեպքի առնչությամբ, դատապարտեցին մամուլին լռեցնելու եւ թիրախավորելու՝ իշխանության քայլերը:

Տեսանյութը հրապարակվելուց տառացիորեն ժամեր անց ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը «Ժողովուրդ» օրաթերթի էլեկտրոնային հասցեին գրություն է ուղարկում՝ տեղեկացնելով, որ ԱԺ աշխատակազմը որոշել է դադարեցնել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնար Մանուկյանի հավատարմագրումը: Հիմնավորումն այն է, որ Քնար Մանուկյանը գտնվել է «արգելված տարածքում, առանց պատգամավորի համաձայնության, իրականացրել է մասնագիտական գործունեություն, շարունակել է հետապնդել եւ հնչեցնել զրպարտական եւ վիրավորական հարցադրումներ...»:

Հայաստանի ժուռնալիստների միությունը խստորեն դատապարտում է ազատ մամուլը թիրախավորելու բոլոր փորձերը, հատկապես՝ ԱԺ ամբիոնն օգտագործելու ու իշխանական պատգամավորի կարգավիճակից օգտվելու եղանակով էժան, որեւէ փաստական հիմք չունեցող շահարկումների միջոցով:

Հայաստանի ժուռնալիստների միությունը դատապարտում է նաեւ ԱԺ աշխատակազմի ղեկավարի նման գործելաոճը, թիմակցին պաշտպանելու՝ պախարակելի մեթոդաբանությունը, ԱԺ պատգամավորին իր ուղիղ պարտականությունները կատարելու, այն է՝ լրագրողի հարցին պատասխանելուց կամայականորեն ազատելու, լրագրողի մասնագիտական գործունեությանը կոպիտ ձեւով միջամտելու, այն խոչընդոտելու հակաօրինական փորձը:

Ցավոք, մամուլը, ազատ խոսքը, լրագրողներին թիրախավորելու, օրենսդրական փոփոխություններով այն կաղապարելու փորձերը, մամուլի վրա կազմակերպված, այդ թվում՝ սոցցանցային հարձակումները, հետապնդումները վերջին տարիներին ավելի ու ավելի այլանդակ բնույթ են կրում, սակայն դրանց հեղինակներին հիասթափություն է սպասվում. ազատ մամուլի վրա տապանաքար դնելու ցանկացած փորձ դատապարտված է ձախողման»:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀԱՊԿ–Ը ՉԻ ԱՇԽԱՏՈՒՄ

Հայաստանի ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն այն դիրքորոշմանն է, որ ՀԱՊԿ-ը չի աշխատում, քանի որ չի պաշտպանում իր տարածքը, այս դեպքում՝ ՀՀ ինքնիշխան տարածքը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սիմոնյանը նման դիրքորոշում հայտնեց խորհրդարանում լրագրողների հետ զրույցում:

Անդրադառնալով ՀԱՊԿ-ի՝ Հայաստանից դուրս գալու վերաբերյալ հնարավոր հարցին՝ ԱԺ նախագահն ասաց. «Բնական է՝ իրենք չեն ուզելու դուրս գան: Իրենց դուրս գալն իրենց քայլերով է ի ցույց դրվում»:

ԱԺ նախագահը չգիտի Հայաստան ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի այցի նպատակը:

Պատասխանելով հարցին, թե նրա այցից հետո հնարավոր է արդյոք, որ հայկական կողմում ինչ-որ բան փոխվի, Սիմոնյանն ասաց. «Դիրքորոշումը կփոխվի այն ժամանակ, երբ ՀԱՊԿ-ը կհայտարարի, որ ադրբեջանական զինուժը գտնվում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքում, այսինքն՝ ՀԱՊԿ-ի տարածքում, եւ իրենք ՀԱՊԿ բոլոր երկրներով պահանջում են, որ այդ զինուժը դուրս գա ՀՀ ինքնիշխան տարածքից: Պետք չէ, որ բելառուս, ղազախ զինվորները գան այստեղ եւ ուժով դուրս հանեն, բայց գոնե մինչեւ նման հայտարարություն չլինի, ՀԱՊԿ-ը չի աշխատում: Եթե ՀԱՊԿ-ը իր տարածքը չի պաշտպանում, ուրեմն ՀԱՊԿ-ը չի աշխատում»,-ասաց Սիմոնյանը:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Դեկտեմբերի 21-ին Փարիզում տեղի են ունեցել հայ-ֆրանսիական երկկողմ ռազմաքաղաքական խորհրդակցությունները:

Հայկական պատվիրակությունը գլխավորել է ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության եւ միջազգային համագործակցության վարչության պետ Լեւոն Այվազյանը: Միջոցառմանը ներկա է եղել նաեւ Ֆրանսիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Հասմիկ Տոլմաջյանը:

Ֆրանսիական կողմից խորհրդակցությունները վարել է Ֆրանսիայի զինված ուժերի նախարարության Միջազգային հարաբերությունների եւ ռազմավարության դիրեկտորատի տնօրեն Ալիս Ռուֆոն:

Խորհրդակցությունների ընթացքում հանգամանորեն քննարկվել են միջազգային եւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող խնդիրներ, նաեւ համագործակցության օրակարգային հարցեր, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ:

ՔՐԵԱԿԱՆ

ԱՄԵՆԱՄԱՍՇՏԱԲԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԻՑ ՄԵԿԸ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր՝ մարդկանց թրաֆիֆինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում քննված հսկայածավալ քննչական եւ վարութային գործողությունների, ՀՀ ոստիկանության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում բացահայտվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության եւ թմրամիջոցների մաքսանենգության ամենամասշտաբային դեպքերից մեկը ինչպես շրջանառված թմրամիջոցների, այնպես էլ դրանց իրացումից առաջացած դրամական միջոցների ծավալների, ներգրավված անձանց քանակի տեսանկյունից: Մասնավորապես, տեւականորեն եւ տակտիկապես արդյունավետ իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ Ուկրաինայի Հանրապետությունում բնակվող ՀՀ քաղաքացի Մ.Ա.-ն ՀՀ-ի տարածքով տարանցիկ ճանապարհով առանձնապես խոշոր չափերով տարատեսակ թմրամիջոցներ տեղափոխելու, ինչպես նաեւ ՀՀ տարածքում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների իրացում կատարելու նպատակով ստեղծել եւ ղեկավարել է հանցավոր կազմակերպություն: Քննությամբ պարզվել է խմբի անդամներից եւս 10-ի ինքնությունը: Հանցավոր խմբի կազմում, որպես ղեկավարներ, ընդգրկվել են Բ.Ա.-ն եւ Ա.Հ.-ն, իսկ որպես մասնակիցներ՝ Ն.Մ.-ն, Գ.Ա.-ն, Հ.Հ.-ն, Մ.Ա.-ն, Զ.Հ.-ն, Վ.Մ.-ն, Ս.Գ.-ն, Հ.Գ.-ն, ինչպես նաեւ քննությամբ դեռեւս չպարզված այլ անձինք:

Ըստ ձեռք բերված փաստական տվյալների՝ 2020թ. ընթացքում խմբի առանձին անդամներ, հիմնականում՝ որպես ղեկավար հանդես եկած անձանց ցուցումով, «Հերոին» տեսակի՝ ընդհանուր շուրջ 1կգ 360 գրամ, «Մեթամֆետամին» տեսակի՝ ընդհանուր 15,12 գրամ, 1 գրամը չգերազանցող չափով «Մորֆին», «Ացետիլկոդեին» տեսակի թմրամիջոցներ են իրացրել՝ կազմակերպելով ու ապահովելով դրանց մի մասի տեղադրումը Երեւան քաղաքի տարբեր հատվածներում, այդ թվում՝ ռեստորանային համալիրի, բժշկական կենտրոնի, արագաչափ սարքի մոտակայքում, որոնք ձեռք են բերվել այլ՝ ինքնությունը բացահայտված եւ դեռեւս չբացահայտված անձինք: Թմրամիջոցների մի մասն իրացնել չի հաջողվել, քանի որ խմբի այդ անդամների մի մասը ձերբակալվել է, եւ նրանց անձնական, ինչպես նաեւ նրանց բնակարաններում, ավտոմեքենայում, այլ շինություններում հայտնաբերվել են նշված թմրամիջոցները: Բացի այդ, հանցավոր կազմակերպության ղեկավար Մ.Ա.-ի եւ ԻԻՀ քաղաքացու միջեւ ձեռք բերված նախնական համաձայնության արդյունքում ԻԻՀ-ից ՀՀ տարածքով դեպի արտերկիր տեղափոխելու եւ ՀՀ-ում իրացնելու նպատակով ԻԻՀ քաղաքացին հանցավոր խմբի անդամների միջոցով ապահովել է մի քանի խմբաքանակներով, առանց մաքսային հսկողության, նախ՝ 2570 գրամ «Հերոին» տեսակի, ապա՝ նաեւ 4964 գրամ «Ափիոն», 4982 գրամ «Հերոին», 3965 գրամ «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի ապօրինի տեղափոխումը Հայաստան: Սակայն մի դեպքում Կապան քաղաքից դեպի Ծավ գյուղ տանող ճանապարհին ԻԻՀ քաղաքացին, մյուս դեպքում թմրամիջոցը ավտոմեքենայով տեղափոխող հանցավոր խմբի անդամներից մեկը դեպի Երեւան տանող ճանապարհին բռնվել են ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից եւ կալանավորվել: Ընդ որում՝ դա տեղի է ունեցել խմբի առանձին անդամների կողմից իրավապահ մարմինների հետ համագործակցության արդյունքում:

ՍԴ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրական դատարանը հայտարարություն է տարածել. «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդի դիմումի հիման վրա, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 138-րդ հոդվածի, ինչպես նաեւ այդ դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մաս.

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64եւ 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը ՈՐՈՇԵՑ.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի եւ նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը:

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների եւ նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը միմյանց զիջելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասը ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող:

4. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին եւ 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:

5. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ՀՀ քննչական կոմիտեն ամփոփել է Լեռնային Ղարաբաղում սույն թվականի սեպտեմբերի 25-ին Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհին հարող տարածքում գտնվող վառելիքաքսուկային նյութերի պահեստում տեղի ունեցած պայթյունի դեպքի առթիվ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթով նախաքննության միջանկյալ արդյունքները: Ըստ այդմ՝ իրականացված քննչական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ նշված պահեստում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով զոհվել է 218 անձ, որոնցից 2-ը հանդիսացել են պահեստում ծառայություն իրականացնող ԼՂ ոստիկանության զորքերի ծառայողներ, 31-ը՝ զինծառայող, այդ թվում՝ 9 սպա, 5 ենթասպա, մյուսները՝ շարքային կազմի ներկայացուցիչներ:

Պայթյունի եւ դրանից հետո բռնկված հրդեհի հետեւանքով առնվազն 120 անձ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ՝ հիմնականում այրվածքների տեսքով: Քննության այս պահի տվյալներով՝ անհայտ է 21 անձի գտնվելու վայրը:

Պայթյունի հետեւանքով մահացած 218 անձից 3-ի ինքնությունը քննությամբ դեռեւս հնարավոր չի եղել պարզել, քանի որ նշված անձանց հարազատները դեռեւս չեն դիմել եւ չեն հանձնել դատագենետիկական փորձաքննություն նշանակելու նմուշ՝ անհրաժեշտ նույնականացումը կատարելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների դատախազությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, ուսումնասիրվել է Երեւան քաղաքի Բեկնազարյան 5 հասցեում գործող, Գեւորգ Չաուշի անվան թիվ 188 հիմնական դպրոցին հատկացված, պետական սեփականություն հանդիսացող հողատարածքի կադաստրային գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երեւանի քաղաքապետի՝ 2002 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ՝ դպրոցին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով հատկացվել է 19.080 քմ հողատարածք: Երեւանի քաղաքապետի՝ 2008 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ՝ դպրոցին հատկացված վերոնշյալ տարածքից 148.71 քմ մակերեսով հողատարածքը, որի վրա քաղաքացի Ս.Յ.-ի կողմից կառուցված է եղել ինքնակամ արտադրական շինություն՝ 132.4 քմ մակերեսով, ճանաչվել է Երեւանի քաղաքապետարանի սեփականություն եւ նույն թվականի նոյեմբերի 14-ին ուղղակի վաճառքով օտարվել այն կառուցած քաղաքացուն: Մինչդեռ, «Կրթության մասին» օրենքի համաձայն՝ պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են առերեւույթ հանցանքի վերաբերյալ, ինչպես նաեւ այլ դեպքեր՝ դատախազը հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 62 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

4 ՄԻՋՈՑԱՌՈՒՄԻՑ 2-Ն Է ԱՆՑԿԱՑՎԵԼ

Տավուշի մարզը միշտ հայտնի է եղել իր մշակույթով՝ բանաստեղծներով, գրողներով, նկարիչներով, քանդակագործներով, երգիչներով, երաժիշտներով, սակայն պետական մակարդակով Տավուշում մշակույթի զարգացմանը քիչ աջակցություն է հատկացվում: Տավուշի մարզպետարանի ավելի քան յոթ տասնյակ աշխատողների մեջ ի պաշտոնե մշակույթով զբաղվում է մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության մեկ աշխատող, որը մշակութային կրթություն չունի, մշակույթի որեւէ ոլորտում ստեղծագործող չէ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք արել, թե Տավուշի մարզում 2023 թվականին պետական ֆինանսավորմամբ մշակութային ինչ միջոցառումներ են նախատեսված, ինչքան ֆինանսավորմամբ, դրանցից քանիսն են կայացել: Մարզպետարանից պատասխանել են. «2023թ. Տավուշի մարզում նախատեսված 4 մշակութային միջոցառումներից իրականացվել են 2-ը՝ 1) «Թատրոնի օր» միջոցառումը, որն իրականացվել է «Կողբի գեղարվեստի դպրոց» ՀԿ-ի կողմից (504,0 հազար դրամ, որից ԱԱՀ՝ 84,0 հազար դրամ): 2) «Վարդավառ» միջոցառումը, որն իրականացվել «Ավանդույթ թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից (840,0 հազ. դրամ, որից ԱԱՀ՝140,0 հազ. դրամ): 3) «Երիտասարդ նկարիչների ցուցահանդես- փառատոն» միջոցառումը նախատեսվում է իրականացնել առաջիկայում «Դիլիջանի Հովհաննես Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից (576.0 հազար դրամ , որից ԱԱՀ՝96,0 հազար դրամ): 4) «Ազգային նվագարանների փառատոն» միջոցառումը չի իրականացվելու, քանի որ այն պետք է իրականացներ «Բերդի մշակութային տուն» ՀՈԱԿ-ը, սակայն վերջինս վերակազմավորվել է բյուջետային հիմնարկի, որի պատճառով հնարավոր չէ միջոցառումն իրականացնել (նախատեսված է եղել 652,0 հազար դրամ, որից ԱԱՀ՝ 108,0 հազար դրամ)»:

ԵՐԿԿՈՄՊԼԵԿՏ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Կատարված արտաքին եւ ներքին արտագաղթի եւ բնակչության բնական աճի բացակայության հետեւանքով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը նվազել է: Այդ պատճառով Տավուշի մարզի բազմաթիվ դպրոցներում գործում են երկկոմպլեկտ դասարաններ, երբ տարբեր դասարանների, օրինակ՝ 5-րդ եւ 6-րդ դասարանների աշակերտները նույն առարկայի դասը միասին են անում: Տավուշի մարզպետարանից ստացված տեղեկություններով՝ մարզի հանրակրթական 76 դպրոցներից 18-ում (Խաչարձան, Աղավնավանք, Ենոքավան, Հովք, Բերքաբեր, Ներքին Ծաղկավան, Աճարկուտ, Դիտավան, Կիրանց, Ակնաղբյուր, Գոշի հիմնական, Իծաքար, Այգեպար, Մոսեսգեղ, Չինարի, Դեղձավան, Բարեկամավան, Ջուջեւան) գործում են երկկոմպլեկտ դասարաններ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԷՆԵՐԳԵՏԻԿԻ ՕՐ

ԿԱ ՀԱՄԱՏԵՂ ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դեկտեմբերի 22-ը ՀՀ-ում նշվում է որպես Էներգետիկի օր, որի առթիվ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում կազմակերպվել է հանդիսավոր միջոցառում, որին ներկա էին համակարգի տարբեր ստորաբաժանումների ղեկավարներ, ներկայացուցիչներ, աշխատակիցներ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, ողջունելով եւ շնորհավորելով էներգետիկայի ոլորտի աշխատակիցներին մասնագիտական տոնի կապակցությամբ, բարձր է գնահատել ոլորտի դերն ու նշանակությունը երկրի տնտեսական կառուցվածքում:

«Ոլորտում բավականին մեծ ծավալով աշխատանքներ են իրականացվում, որոնց ուղղությամբ մենք, իհարկե, եւ հաջողություններ ունենք, եւ ունենք ծրագրեր, որոնք կամ դանդաղ են ընթանում, կամ իրականացման տեմպը բավարար չէ»,-ասաց նախարարը՝ հավելելով, որ մասնագիտական տոնը նաեւ առիթ է՝ տեսնելու եւ հիշելու այն ծրագրերը, որոնք իրականացման ընթացքում չեն, ինչու կան նման խնդիրներ եւ ինչ պետք է արվի համատեղ ուժերով դրանց ընթացքն ապահովելու կամ արագացնելու համար:

Ըստ գերատեսչության ղեկավարի՝ այնուամենայնիվ, մի շարք ուղղություններով բավականին մեծածավալ աշխատանքներ կան:

«Ոլորտը մեծ փոփոխություններ է նաեւ ապրում էներգետիկ շուկայի հետ կապված, ինչպես նաեւ ատոմակայանի ժամկետի կրկնակի երկարաձգման եւ նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների առումով, որը մեծ հաշվով միայն ատոմակայանին չի առնչվելու»,-մանրամասնեց Սանոսյանը:

Նա գոհացուցիչ համարեց վերականգնվող, մասնավորապես՝ արեւային էներգիայի ուղղությամբ աշխատանքների արդյունքը:

«Այստեղ, մի կողմից, կառավարության կողմից վարվող խրախուսող քաղաքականությունը տալիս է իր արդյունքը, բայց, մյուս կողմից, մենք նորմատիվային, տեխնիկական եւ այլ առումներով որոշակի խնդիրների ենք բախվում, եւ ինչքան էներգետիկ հաշվեկշռում արեւային էներգիայի ծավալը մեծանում է, այնքան, կարծես, այդ խնդիրները տեսանելի են դառնում, ինչը ենթադրում է, որ մենք եւ գործընկերները միասին պետք է փորձենք այդ նորմատիվ դաշտը համահունչ փոխել կամ այլ կերպ ձեւակերպել, նոր մտքեր կամ գաղափարներ, օրենսդրական լուծումներ գտնել, որոնք կբերեն այդ համահունչ զարգացմանը»,-ավելացրել է նախարարը՝ կարեւորելով համատեղ աշխատանքը ոլորտում արձանագրված բավականին մեծ զարգացման մեջ:

«Կա համատեղ, միասնական, մեծ թիմային աշխատանք, եւ նաեւ շատ խնդիրներ լուծվում են դրա արդյունքում»,-ընդգծեց Սանոսյանը՝ շեշտելով, որ բավականին մեծ ընդգրկմամբ համակարգի աշխատակիցներն իրենց մասնագիտական դերակատարումն ու գիտելիքներն են ներդնում ոլորտի զարգացման գործում:

ՏԿԵ նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանի խոսքով՝ ոլորտում տարվա գլխավոր ձեռքբերումը համարեց ազատ շուկայի կայացումը:

«Մենք արդեն փաստել ենք, որ ազատ եւ արդար գնագոյացումն այլեւս կայացած է Հայաստանի Հանրապետությունում»,-նշեց նա:

Էներգետիկի օրվա առթիվ ՏԿԵ նախարարը շնորհակալագրերով է պարգեւատրել ոլորտի մի խումբ աշխատակիցների:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«ԵՐԵՎԱՆԸ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ»

Դեկտեմբերի 21-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը անցկացվեց Երեւանի քաղաքապետարանի հայտարարած «Երեւանը կանանց համար» դրամաշնորհային մրցութային ծրագրի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը եւ համերգը, որին ելույթ ունեցավ Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ դիրիժոր Նատալի Գալստյանի ղեկավարությամբ:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանը սեպտեմբերին հայտարարել էր «Երեւանը կանանց համար» դրամաշնորհային ծրագիրը, որը միտված է կին արվեստագետների ստեղծագործական գործունեության խթանմանը, արվեստի եւ գրականության ոլորտում գործունեություն ծավալող կանանց կողմից ստեղծված գեղարվեստական/մշակութային արժեքների տարածմանը, արժեւորմանը, հանրահռչակմանը, արվեստի եւ մշակութային կյանքի տարբեր բնագավառներում կանանց ներգրավվածության, ներկայացվածության ու հանրային ճանաչման մեծացմանը:

Դրամաշնորհային ծրագիրն իրականացվում էր հետեւյալ ուղղություններով՝ արվեստի կրթություն, գրականություն, գեղարվեստ, քանդակագործություն, թատերարվեստ, երաժշտարվեստ: Դրամաշնորհային ծրագրի տարբեր ուղղություններով Երեւանի քաղաքապետարանը ստացել էր շուրջ 80 հայտ:

«Արվեստի կրթություն» անվանակարգում (500000-ական դրամ՝ արվեստի եւ մշակույթի բնագավառում մագիստրոսական ծրագրով ուսուցման համար) հաղթող ճանաչվեցին չորս ուսանողներ՝ Արմենուհի Մարուքյանը, Գոհար Գաբիկյանը, Էլեն Նահապետյանը, Կատրին Ումբրեյանը:

«Գրականություն» անվանակարգում (2500000 դրամ՝ հայ անվանի կնոջ կամ կանանց մասին վեպ հեղինակելու համար) մրցանակի արժանացավ Արփի Ոսկանյանը:

«Գեղարվեստ» անվանակարգում հաղթող չի ճանաչվել:

«Քանդակագործություն» անվանակարգում (750000-ական դրամ՝ քաղաքային քանդակ հեղինակելու համար) խրախուսական մրցանակի արժանացան Արմենուհի Հովսեփյանը եւ Նունե Թումանյանը:

«Թատերարվեստ» անվանակարգում (պիես եւ բեմադրություն) մրցանակի արժանացան Անուշ Ասլիբեկյանը եւ Լուսինե Երնջակյանը (Թատերական նախագծի համար հատկացված գումարը՝ 4000000 ՀՀ դրամ), ինչպես նաեւ Կարինե Խոդիկյանը եւ Անի Վարդանյանը (Թատերական նախագծի համար հատկացված գումարը՝5100000 ՀՀ դրամ):

«Երաժշտարվեստ» անվանակարգում (կոմպոզիցիա՝4000000 ՀՀ դրամ) մրցանակ ստացավ Արմենուհի Կարապետյանը: «Երգի կատարում» (երգի կատարում կամ ձայնագրություն՝2500000 ՀՀ դրամ) անվանակարգում հաղթեց «ՏաԼույս» մանկապատանեկան երգչախումբը, գեղարվեստական ղեկավար՝ Մարիա Գալստյան:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ

Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոն դեկտեմբերի 22-ին՝ ժամը 15:45-ին, ահազանգ է ստացվել, որ հինգ դեռահաս իջել են Նուռնուս գյուղի մոտակա ձորը եւ տեղանքի դժվարանցանելիության պատճառով չեն կարողանում ինքնուրույն բարձրանալ. երեխաներից մեկի ինքնազգացողությունը վատացել է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Դեռահասներից մեկն ինքնուրույն դուրս է եկել ձորից:

Փրկարարները Դ. Մ.-ին (ծնված 2011 թ.), Գ. Ե.-ին (ծնված 2010 թ.), Ս. Խ.-ին (ծնված 2010 թ.) եւ Տ. Ս.-ին (ծնված 2010 թ.) ուղեկցել են անվտանգ տարածք. բժշկական օգնության անհրաժեշտություն չի առաջացել:

ԱՌԱՆՑ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ

Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը վավերացրեց արձանագրություն, որով Հայաստանի քաղաքացիները հնարավորություն կստանան մուտք գործել Արաբական Էմիրություններ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջեւ 2009 թվականի հունիսի 21-ի՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատելու մասին փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությանը կողմ է քվեարկել 88 պատգամավոր, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ներկայացնելով նախագիծը՝ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը նշել է, որ երկու երկրների միջեւ համագործակցությունը գրեթե բոլոր բնագավառներում զարգանում է դինամիկ կերպով, առկա է ընդգրկուն երկկողմ օրակարգ: Միացյալ Էմիրությունները տարածաշրջանում ՀՀ առաջին առեւտրային գործընկերն է:

«Յուրաքանչյուր շաբաթ մոտ 30 թռիչք է լինում Հայաստանից Էմիրությունների տարբեր քաղաքներ:

Արձանագրության վավերացման արդյունքում երկու երկրների՝ 6 ամսից ոչ պակաս վավերականության ժամկետով անձնագրեր ունեցող քաղաքացիները կարող են մուտք գործել, դուրս գալ եւ տարանցմամբ տեղաշարժվել իրենց համապատասխան երկրների տարածքով՝ առանց մուտքի արտոնագրի եւ վճարի: Մուտքի արտոնագիր ստանալու պահանջից ազատված անձնագրեր են համարվում երկու երկրների վավերացման դիվանագիտական, հատուկ, պաշտոնական եւ սովորական անձնագրերը: Նշված անձնագրեր ունեցող կողմերի քաղաքացիներին թույլատրվում է գտնվել մյուս կողմի երկրի տարածքում առավելագույնը 90 օր ժամկետով»,- ասել է Կոստանյանը:

ՅՈՒՆԻՍԵՖ

ԿԵՆՏՐՈՆԸ ՓՐԿՕՂԱԿ Է

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարն ամփոփում է Հայաստան այցը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի տնօրեն եւ փախստականների եւ միգրանտների կարիքներին արձագանքման հարցերով Եվրոպայում հատուկ համակարգող Ռեջինա դե Դոմինիչիսն ընդգծել է Հայաստանում փախստական երեխաներին շարունակական աջակցության անհրաժեշտությունը:

Այցի ընթացքում դե Դոմինիչիսը հանդիպել է ՀՀ կառավարության պաշտոնատար անձանց՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի, արտաքին գործերի փոխնախարար Պարույր Հովհաննիսյանի, փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի եւ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի հետ: Քննարկումներն ընթանում էին ընթացիկ բարեփոխումներին ուղղված աջակցության եւ Հայաստանում երեխաների հիմնական առաջնահերթությունների շուրջ:

Դե Դոմինիչիսը վերահաստատեց ՅՈՒՆԻՍԵՖ-ի հանձնառությունը՝ շարունակելու գործակցել ՀՀ կառավարության հետ հումանիտար-զարգացման ծրագրերի շրջանակում՝ ապահովելու բոլոր երեխաների, այդ թվում՝ փախստական երեխաների եւ ընտանիքների համար հավասար հասանելիություն պաշտպանության, առողջապահության, կրթության եւ սոցիալական աջակցության ծառայություններին:

Սեպտեմբերին փախստականների ներհոսքին արձագանքելու նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ը վերապատրաստել է առաջնագծում հարյուրավոր սոցիալական աշխատողների՝ տրամադրելու հոգեբանական առաջին օգնություն եւ աջակցություն եւ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամք՝ արդեն ընդգրկելով 7025 երեխայի, դեռահասների եւ խնամակալների:

«Տեղահանումը խորապես ազդում է երեխաների վրա: Չպետք է մոռանանք, որ 30,000 երեխայի եւ նրանց ընտանիքներին անհրաժեշտ են ընթացիկ հոգեբանական աջակցություն եւ մշտական հասանելիություն կենսական նշանակության ծառայություններին», -նշել է դե Դոմինիչիսը: ՅՈՒՆԻՍԵՖ-ը մինչեւ 2024 թ.-ի մարտ ամիսը 12,6 մլն ԱՄՆ դոլարի հանգանակության կոչ է արել փախստական երեխաների եւ նրանց ընտանիքների կարիքները հոգալու համար: Այս կոչը միայն 40 տոկոսով է ֆինանսավորված:

Ավելի քան 3700 դպրոցահասակ երեխաներ ստացել են դպրոցական պայուսակներ, գրենական պիտույքներ եւ ուսումնական այլ պարագաներ, իսկ հինգ մարզերի մանկապարտեզների 320-հոգանոց աշխատակազմը վերապատրաստվել է բոլոր երեխաների համար ներառական ուսումնական միջավայր ապահովելու համար: Աշխատանքներ են տարվում 14,000 երեխաների ընտանիքների այս տարի հագուստի վաուչեր տրամադրել, իսկ 2,500 հղի եւ նոր ծննդաբերած կանանց՝ դեղատներից օգտվելու վաուչերներ:

Այցի ընթացքում դե Դոմինիչիսը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Ավանեսյանի հետ այցելել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ գործող կենտրոն, որը խնամք եւ աջակցություն է տրամադրում խոցելի երեխաներին եւ ընտանիքներին, այդ թվում՝ բռնություն վերապրած եւ փախստական երեխաներին: Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոնը» երեխաների եւ նրանց ընտանիքների համար ապահով վայր է, որտեղ նրանք կարող են օգտվել կենսական նշանակության, այդ թվում՝ հոգեսոցիալական աջակցության եւ առողջապահության ծառայություններից: Կենտրոնը նաեւ աջակցում է կախել ընտանիքների բաժանումը:

«Կենտրոնում ես հանդիպեցի Հիլդա անունով մի փոքրիկ աղջկա, որ, չնայած իր դժվարություններին, պատմեց ինձ, որ սիրում է իր դպրոցը, մաթեմատիկան եւ ցանկանում է նկարիչ դառնալ: Նրան դուր է գալիս կենտրոն գալ, քանի որ այնտեղ նա խաղաղություն է գտնում: Կենտրոնը փրկօղակ է երեխաների եւ նրանց ընտանիքների համար, իսկ սոցիալական աշխատողները եւ հոգեսոցիալական աջակցության մասնագետները անհավանական աշխատանք են կատարում գործերի կառավարման եւ ուղղորդման հարցում», - նշել է դե Դոմինիչիսը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը շարունակում է աշխատել ՀՀ կառավարության, գործընկերների եւ քաղաքացիական հասարակության հետ՝ երեխաների եւ նրանց ծնողների համար հոգեկան առողջության եւ հոգեսոցիալական աջակցության հասանելիությունն ընդլայնելու համար՝ միաժամանակ երկարաժամկետ հեռանկարում շարունակելով ուժեղացնել համայնքային ծառայությունները:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը Հայաստանում գործում է 1994 թվականից եւ աջակցում է կառավարությանը երեխաների պաշտպանության, կրթության, առողջապահության եւ սոցիալական քաղաքականության ոլորտներում՝ Հայաստանի երեխաների կարիքների արձագանքմանն ուղղված ծրագրերի մշակման եւ իրականացման գործում՝ կենտրոնանալով բնակչության առավել խոցելի շերտերի վրա:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

ՀԱՅ ԿԻՆՈՅԻ 100-ԱՄՅԱԿԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ «Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման ՀԿ-ն հրատարակել է «Հայկական կինոնյութեր եւ փաստաթղթեր (1909-1936)» գիրքը:

«Հայկական կինոնյութեր եւ փաստաթղթեր (1909-1936)» գիրքը հրատարակվել է Հայ կինոյի 100-ամյա հոբելյանական ծրագրի շրջանակում: Օրերս տեղի է ունեցել հրատարակության շնորհանդեսը:

Շնորհանդեսին ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը, անվանի արվեստագետներ, կինոգործիչներ:

«Հայկական կինո. նյութեր եւ փաստաթղթեր (1909-1936)» գիրքը եզակի հրատարակություն է: Գրքում տեղ են գտել հայ կինոյի կայացման վաղ տասնամյակներին վերաբերող բացառիկ արխիվային նյութեր, որոնց մեծ մասը հանրությանը ներկայացվում է առաջին անգամ:

600 էջանոց այս գրքում ժողովված են շուրջ 375 փաստաթուղթ, 214 լուսանկար եւ այլ նյութեր:

Գրքի հեղինակը «Ֆիլմադարան» ՀԿ-ի նախագահ, կինոգետ, կինոռեժիսոր Գարեգին Ջաքոյանն է: Կազմողներն են Գարեգին Ջաքոյանը, Մարինա Մարտիրոսյանը, հրատարակիչ՝ «Անտարես» հրատարակչություն:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

ԱՆՎՃԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Սիրելի՛ արցախցիներ,

«Project Skill Harbor» կրթական նախագիծը սկսում է 6-ամսյա անվճար եզակի դասընթացներ ՏՏ ոլորտում մեծ պահանջարկ ունեցող հետևյալ ուղղություններով՝ QA (որակի ապահովում) եւ հաշվողական դիզայն «BeeGraphy», ինչպես նաեւ Python-ի եւ տեխնիկական անգլերենի դասընթացներ՝ նշված ուղղությունները հեշտությամբ յուրացնելու համար: Դասընթացները ձեզ կտան համապարփակ գիտելիք եւ հմտություններ, որոնք անհրաժեշտ են այսօրվա տեղեկատվական համայնքում հաջողակ կարիերա սկսելու համար: Երկու շաբաթ ծրագիրը փորձարկելուց հետո դուք կկարողանաք ընտրել ձեզ անհրաժեշտ ուղղությունը:

Դասընթացի առավելություններից է անհատականացված մոտեցումը, որը ձեզ հնարավորություն կտա կազմել եզակի ուսումնական ծրագիր՝ ձեր մասնագիտական նպատակներին եւ հետաքրքրություններին համապատասխան:

Ինչպե՞ս մասնակցել

Ուսումնական նախագծին մասնակցելու, ինչպես նաեւ մանրամասներին ծանոթանալու համար միացե՛ք մեր ֆեյսբուքյան էջին՝ Educational Project Skill Harbor, այնուհետեւ ուղարկե՛ք ձեր մասին հիմնական տեղեկությունները՝ անուն, ազգանուն, հեռախոսահամար projectskillharbor@gmail.com հասցեին: Գրանցումը հաջողությամբ ավարտելուց հետո դուք կստանաք նախագծի Demo տարբերակի ներկայացմանը մասնակցելու հրավեր, որտեղ նշված կլինի ուսումնական հաստատություն այցելության օրը, ժամը եւ հասցեն: Demo-ի ընթացքում կծանոթանաք 6-ամսյա դասընթացներից յուրաքանչյուրի ծրագրին եւ կընտրեք զարգացման ուղղությունը: Դասընթացի ավարտից հետո Project Skill Harbor-ը կաջակցի ձեզ հարցազրույցներին պատրաստվելու հարցում, կստանաք նաեւ խորհրդատվություն՝ Ձեր պրոֆիլին համապատասխանող առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Ծրագրին կարող են դիմել 17-22 տարեկան տղաներ եւ աղջիկներ:

Դասընթացների սկիզբը՝ 10.01.2024թ.:

Դիմումներն ընդունվում են մինչեւ 29.12.2023թ.:

Հարցերի դեպքում կարող եք գրել մեր ֆեյսբուքյան էջին:

QA թեստավորում

QA-ն կամ որակի վերահսկողությունը պրակտիկ գործընթաց է, որի նպատակն է կանխել սխալները, որոնք կարող են առաջանալ ծրագրավորման աշխատանքի ընթացքում: QA մասնագետի ճիշտ եւ համակարգված աշխատանքի շնորհիվ այսօր կազմակերպությունները կարողանում են ստեղծել հաճախորդի պահանջներին համապատասխան պրոդուկտ/ծառայություն:

Հաշվողական դիզայն՝ BeeGraphy

Նրանք, ովքեր կընտրեն հաշվողական դիզայնը, ձեռք կբերեն բացառիկ հմտություններ եւ հնարավորություն ինտեգրվել առաջադեմ CAD (Computer-Aided Design) տեխնոլոգիաների ոլորտին եւ պատրաստվել հաջող մեկնարկի մասնագիտական ոլորտում, այդ թվում՝ BeeGraphy ստարտափում, որն ապահովում է հաշվողական դիզայնի ոլորտում առաջադեմ գործիքներ եւ տեխնոլոգիաներ:

Python

Դասընթացը կսովորեցնի ինչպես օգտագործել Python-ը տվյալների վերլուծության, վեբ մշակման, գիտական հաշվարկների եւ այլնի համար: Python-ը ակտուալ կիրառություն ունի Back-End ծրագրավորման, տվյալների վերլուծության, արհեստական բանականության, ինչպես նաեւ համակարգչային գիտության բնագավառներում:

Տեխնիկական անգլերեն

Այս դասընթացը նպատակ ունի մասնակիցներին տրամադրել անհրաժեշտ լեզվական գործիքներ եւ ոլորտին հատուկ տերմինաբանություն՝ ՏՏ ոլորտին առնչվող տարբեր շրջանակներում վստահ եւ արդյունավետ հաղորդակցվելու համար: Դասընթացի ավարտից հետո կկարողանաք ընդլայնել ընդհանուր անգլերեն լեզվի հմտությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով ՏՏ տերմինաբանությանը եւ բառապաշարին»:

Team Telecom Armenia

Գ.

ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ՓՐԿԵՑԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Ամանորյա հեքիաթների հերոսներն արցախցի փոքրիկների օգնությամբ փրկեցին Նոր տարին՝ գտնելով ժամանակի մեքենան, որը խափանվել էր չար հերոսների ձեռքով. Team Telecom Armenia-ն Հայաստանի երգի պետական թատրոնի հետ համագործակցությամբ «Իմ Նոր տարի» մանկական ինտերակտիվ երաժշտական ներկայացման տոմսեր է նվիրել 1000 արցախցի երեխաների՝ նրանց փոխանցելով Ամանորի հրաշքը եւ պարգեւելով ուրախ ժամանց:

Team Telecom Armenia-ի փոխտնօրեն Արամ Բարսեղյանը նշում է, որ այս համագործակցությունն ամբողջացնում է ընկերության կողմից Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար իրականացվող աջակցության ծրագրերը. «Սեպտեմբերյան ցավալի իրադարձությունների ընթացքում եւ դրանից հետո մենք հեռախոսի ու ինտերնետ կապի հասանելիությամբ ապահովեցինք արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին՝ ակտիվացնելով 097 կոդով հեռախոսահամարները Հայաստանի տարածքում եւ տրամադրելով անվճար կապ՝ 6 ամիս ժամկետով: Ուրախ եմ նշել նաեւ, որ այս ընթացքում արցախցի շատ մասնագետներ են միացել մեր թիմին: Շարունակելով մեր աջակցության ծրագրերը՝ Team-ով որոշեցինք միանալ Երգի պետական թատրոնին՝ Ամանորին հեքիաթային ժամեր ու ժպիտներ պարգեւելու արցախցի երեխաներին»:

Ներկայացմանը մասնակցում են Արցախից բռնի տեղահանված եւ կորուստ ունեցող ընտանիքների երեխաները: Վերջիններիս ընտրությունը կատարվել է «Հայորդի» նախաձեռնության միջոցով:

«Գործունեության ամբողջ ընթացքում Երգի պետական թատրոնն ուշադրության կենտրոնում է պահել արցախցի հանդիսատեսին եւ ամեն տարի Ամանորին ներկայացումներ է ունեցել Արցախում,- պատմում է թատրոնի տնօրեն Մանե Գրիգորյանը: - Մեզ համար անչափ կարեւոր էր պահպանել այս ավանդույթը եւ արդեն Հայաստանում հյուրընկալել մեր փոքրիկներին: Հույս ունենք, որ ներկայացումից հետո նրանք կրկին կհավատան հրաշքին ու երազանքներին՝ անկախ ամեն ինչից: Ուրախ ենք, որ տեսանք նրանց փայլող աչքերը եւ լսեցինք բարձր ծիծաղը»:

«Իմ Նոր տարի» երաժշտական ներկայացումը բեմում կլինի մինչեւ հունվարի 7-ը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը, որը որակյալ ինտերնետով կապահովի Հայաստանի բոլոր մարզերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏ

Անգլիական «Մանչեսթեր Սիթիի» նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդը The Guardian-ի կողմից ճանաչվել է 2023 թվականի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ:

Նորվեգացին առաջին տեղն է զբաղեցրել 218 փորձագետից բաղկացած քվեարկության արդյունքում:

Երկրորդ տեղը զբաղեցրել է Մադրիդի «Ռեալի» անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը, իսկ լավագույն եռյակը եզրափակել է ՊՍԺ-ի ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն: «Ալ Նասրի» հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն 27-րդն է: Քվեարկությանը մասնակցել են նախկին ֆուտբոլիստներ ու մարզիչներ, ինչպես նաեւ լրագրողներ:

The Guardian-ի կողմից կազմված տասնյակն այսպիսի տեսք ունի.

1. Էրլինգ Հոլանդ (Մանչեսթեր Սիթի)
2. Ջուդ Բելինգեմ (Ռեալ Մադրիդ)
3. Կիլիան Մբապե (ՊՍԺ)
4. Հարի Քեյն (Բավարիա)
5. Ռոդրի (Մանչեսթեր Սիթի)
6. Վինիսիուս Ժունյոր (Ռեալ Մադրիդ)
7. Մոհամեդ Սալահ (Լիվերպուլ)
8. Կեւին դե Բրույնե (Մանչեսթեր Սիթի)
9. Վիկտոր Օսիմհեն (Նապոլի)
10. Լիոնել Մեսի (Ինտեր Մայամի):

ՀՖՖ ՕՐԱՑՈՒՅՑԸ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հերթական՝ 24-րդ ժողովը կկայանա դեկտեմբերի 23-ին, մեկնարկը՝ ժամը 13:00-ին. հաղորդում է ՀՖՖ-ն: Օրակարգում ընդգրկված է 14 հարց, որոնց թվում է ՀՖՖ նախագահի ընտրությունը: ՀՖՖ ժողովին լրագրողների ներկայություն նախատեսված չէ:

Ն. ԹԻԿՆԻԶՅԱՆԻ ՀԱՍՑԵԻՆ

Մոսկվայի «Լոկոմոտիվի» մամուլի ծառայությունը կատակել է Հայաստանի ազգային հավաքականի պաշտպան Նաիր Թիկնիզյանի հասցեին:

«Այն զգացողությունը, երբ առավոտյան սկսում ես ոչ թե 3:30-ին, այլ ծովում մի բաժակ սուրճով»,- գրված է տելեգրամյան գրառման մեջ: Հիշեցնենք, որ օրեր առաջ Տիկնիզյանի կինը՝ «Матч ТВ»-ի հաղորդավարուհի Յանա Ռոմաշկինան, խոստովանել էր, որ ամուսինն արթնանում է առավոտյան ժամը 3:30-ին, որ իրեն աշխատանքի ուղեկցի:

ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին մեկնաբանել է Եվրոպական խորհրդի արդարադատության դատարանի՝ Սուպերլիգայի վերաբերյալ կայացրած որոշումը: «Կարծում եմ դա կարեւոր որոշում էր բոլոր ակումբների համար: Լավ է, որ մրցաշարերի կազմակերպման հարցում մենաշնորհ չի լինելու: Բացի այդ, օրացույցը կարող է բարելավվել, ինչը դրական է բոլորի համար: Ի՞նչ եմ մտածում Սուպերլիգայի ձեւաչափի մասին: Ես դեռ պետք է նայեմ դա, բայց այս որոշումը, ինչպես արդեն ասացի, լավ կազդի ֆուտբոլի վրա»,- The Athletic-ի հետ զրույցում ասել է Անչելոտին: Հիշեցնենք, որ Եվրոպական խորհրդի արդարադատության դատարանը որոշում է կայացրել հօգուտ այն ակումբների, որոնք ցանկանում էին կազմավորել Սուպերլիգան: Դատարանը թույլատրել է նախագծի վերակազմավորումը: Ըստ որոշման՝ ՈՒԵՖԱ-ի ու ՖԻՖԱ-ի ներկայացուցիչները «հակասում են մրցակցային օրենսդրությանը եւ ծառայությունների մատուցմանը»:

● *Խամաճիկների պետական թատրոնում դեկտեմբերի 16-ին տեղի կունենա «Անբան Հուռին.am» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 12:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի իրավատերը:

Սոֆյա Գեւորգյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք, հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները, դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով տրամադրվող իրավունքներից:

էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները:

Արսեն Սուրենյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի
եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Առաջին անգամ պաշտոնապես հայկական ֆիլմը հասավ Օսկարի շորթլիսթ՝ բաղկացած ընդամենը 15 ֆիլմերից, այդ թվում՝ Վիմ Վենդերսի, Ակի Կաուրիսմյակիի, Ջոնաթան Գլեյզերի եւ այլոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 8 - 13 - 1 + 3
	Կոտայքի լեռներ	- 8 - 12 - 1 + 2
	Կոտայքի նախալեռներ	- 5 - 8 + 3 + 4
	Գեղարքունիք	- 8 - 13 + 1 + 5
	Լոռի	- 4 - 7 + 8 + 12
	Տավուշ	- 3 + 1 +12+ 15
	Արագածոտնի լեռներ	- 9 - 12 - 1 + 1
	Արագածոտնի նախալեռներ	- 4 - 7 + 1 + 5

	Արարատ	- 4 - 6 + 4 + 7
	Արմավիր	- 6 - 9 + 4 + 6
	Վայոց ձորի լեռներ	- 10 -13 - 1 - 3
	Վայոց ձորի նախալեռներ	- 4 - 6 + 5 + 7
	Սյունիքի հովիտներ	- 5 - 8 + 4 + 6
	Սյունիքի նախալեռներ	- 5 - 7 + 2 + 5
	ԼՂՀ	- 4 + 2 0 + 2
	Երեւան	- 0 - 2 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*